ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

--- օգոստոսի 2026 թվականի №---Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ «ՌԵՆՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՌՈՒՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2026 թվականի հուլիսի 9-ի №Ե-2633-26 և հուլիսի 16-ի №Ե-2749-26 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Հանրապետության հրապարակ ՏԵ-1775, Բ6 էլ. ենթակայաններ հասցեում գտնվող ՏԵ-1775 ենթակայանին (այսուհետ նաև՝ Ենթակայան) հարակից Բուզանդի 5 հասցեում նախատեսվում է իրականացնել կառուցապատման աշխատանքներ, ուստի անհրաժեշտ է, որ Ենթակայանն առուվաճառքի գործարքով (այսուհետ՝ Գործարք) հանձնվի վերը նշված տարածքի ձեռք բերող հանդիսացող՝ «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Գրության համաձայն, Գործարքի կողմերի միջև կնքվելիք համաձայնագրով նախատեսվում է, որ «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ընդհանուր շինարարական աշխատանքների շրջանակում Ընկերությանը տրամադրի Երևան քաղաքի Բուզանդի 5 հասցեում կառուցվելիք շինությունում նոր ենթակայանի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ և տեխնիկական պահանջներին համապատասխանող տարածք, ներառյալ՝ ենթակայանի շինությունը, դրա շահագործման համար անհրաժեշտ այն

սարքավորումները, որոնց տեղափոխումն անհնար է, իսկ Ենթակայանի գործարկման համար անհրաժեշտ մնացած սարքավորումների մասով՝ ապահովել ինչպես դրանց ձեռքբերումը, այնպես էլ իր հաշվին տեղափոխումը: Ընդ որում, Ընկերության համար լրացուցիչ ֆինանսական պարտավորություն չառաջանալու համար կնքվելիք գործարքների գները պետք է սահմանվեն համարժեք՝ անկախ նոր կառուցվող շինության (այսուհետ՝ Նոր գույք) շուկայական արժեքի՝ ավելի բարձր լինելու հանգամանքից, իսկ եթե Ենթակայանի շուկայական արժեքը գերազանցում է Նոր գույքի շուկայական արժեքը, «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվում է Ընկերությանը վճարել Նոր գույքի և Ենթակայանի շուկայական արժեքների միջև եղած տարբերությունը: Բացի այդ, Ընկերությանն օտարվելիք Նոր գույքի նախագծային փաստաթղթերն ու հատկանիշները պետք է նախապես գրավոր կարգով համաձայնեցվեն Ընկերության հետ և Նոր գույքը պետք է կառուցվի վերջինիս կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան: Ուստի, վերը նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրում է տալ Գործարքին համաձայնություն,

բ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Հանրապետության հրապարակ ՏԵ-1775, Բ6 էլ. ենթակայաններ հասցեում գտնվող ՏԵ-1775 ենթակայանը «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առուվաճառքի գործարքով օտարելուն՝ պայմանով, որ՝

1) Ընկերությունը սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո 24 ամսվա ընթացքում «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերի նոր ենթակայանի համար նախատեսված տարածքը, ենթակայանի շինությունը և սարքավորումները,

2) Ընկերությունը պարտավոր է ապահովել Ենթակայանից էլեկտրաէներգիա ստացող բաժանորդների անխափան և անվտանգ էլեկտրամատակարարումը,

3) կնքվելիք գործարքների գները պետք է սահմանվեն համարժեք՝ անկախ Նոր գույքի շուկայական արժեքի՝ ավելի բարձր լինելու հանգամանքից, ընդ որում՝ Ենթակայանի շուկայական արժեքը Նոր գույքի շուկայական արժեքը գերազանցելու դեպքում «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվում է Ընկերությանը վճարել Ենթակայանի և Նոր գույքի շուկայական արժեքների միջև եղած տարբերությունը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

ա. սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը,

բ. սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից Նոր Գույքի ձեռքբերման ծախսը կներառվի Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում՝ ոչ ավելի, քան 42800000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Ընկերությունն իրավասու է այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
--- օգոստոսի 2026թ.